

05/10934-16
1/06.2/8745-16



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն № 765- ՆԿ

ք.Երևան

<ՃԾ> 07 2016 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ
ԻՐԱՎՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 16-Ի N 721- Ա
Հ Ր Ա Մ Ա Ն Ն ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով և «Կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N295-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված «արտակարգ իրավիճակների նախարարության կանոնադրության 16-րդ կետի 4-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Սահմանել՝ «արտակարգ իրավիճակների նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի օգոստոսի 16-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունում քաղաքացիների ընդունելության կազմակերպման կարգը հաստատելու մասին» N721-Ա հրամանը:
3. Հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

Ա.Երիցյան